ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 929-Ա «22» մարտի 2016 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի Հ.502-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի մարտի 18-ի << Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի հ.232-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> հ.502-Ա որոշմամբ, Երևան քաղաքի ավագանին տվել է իր համաձայնությունը՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի՝ 498.7քմ և 5-րդ հարկի՝ 74.8քմ մակերեսներով տարածքները երեք տարի ժամկետով <<Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին /կենսառեսուրսների կառավարման գործակալություն/ տրամադրելու մասին:

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, 466-րդ և 468-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն և 2016 թվականի մարտի 18-ի հ.502-Ա որոշումները.

1. Չեղյալ ճանաչել Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 24-ի <<Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին>> հ.2064-Ա որոշումը:

2. Երևան համայնքի սեփականություն համարվող, Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայական) 3-րդ հարկի՝ 498.7քմ և 5-րդ հարկի՝ 74.8քմ մակերեսներով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով, 3 /երեք/ տարի ժամկետով տրամադրել <<Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին /կենսառեսուրսների կառավարման գործակալություն/:

3. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, <<Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի /կենսառեսուրսների կառավարման գործակալություն/ հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ 498.7քմ և 74.8քմ մակերեսներով տարածքների համար:

4. Ընդունել ի գիտություն, որ.

1) որոշման 3-րդ կետով նշված պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում.

2) պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են <<Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի /կենսառեսուրսների կառավարման գործակալություն/ կողմից:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ